

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄ
ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱԴԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2035/2022/ԿՈՒՎ4/Ա**

Ք. Երևան

10.05.2022
Կազման ամսաթիվ

1. ԱՇՈՏ ԱԲԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՎՀՀ 40091288

(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. ՌԴ

(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. 72 4739998

(Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/
հանրային ծառայությունների համարանիշը)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել.

ՀՀ կադաստրի կոմիտեից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձ Աշոտ Գրիգորյանի կողմից 04.05.2021 թվականին «ԱՎԵՏԻՍ ՀԱԿՈՐՅԱՆ ԽԱԶԻԿԻ» Ա/Զ-ին (ՀՎՀՀ՝ 43077089) օտարվել է Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Կոտայքի փողոց 1/51 հասցեում գտնվող անշարժ գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 11,435,820 ՀՀ դրամ (*հողամասի (0,012հա) շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ 1,261,656 ՀՀ դրամ և շինության (113,62քմ) շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ 13,648,538 ՀՀ դրամ*):

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 143-րդ հոդվածին համապատասխան՝ եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես համախառն եկամտի և օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտները, որտեղ ֆիզիկական անձի կողմից գույքի օտարումից հարկային գործակալ չհանդիսացող կազմակերպությունից ստացվող եկամուտները որպես նվազեցվող եկամուտներ սահմանված չեն:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սյուն մասով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն, որ որ «ԹՈՄՓՍՅԱՆՑ» ՍՊԸ-ն հանդիսանում է միկրոձեռնարկության ստատուսով և չի կարող հանդիսանալ հարկային գործակալ՝ ֆիզիկական անձի կողմից վերը նշված հասցեում օտարված անշարժ գույքից ստացված եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկում է Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

Ֆիզիկական անձը մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ՝ հարկային մարմին պետք է ներկայացնի եկամտային հարկի տարեկան հաշվարկ (ծևը հաստատված է ՀՀ

ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի 3-րդ հավելվածով) և վճարի դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումարը:

Ֆիզիկական անձի կողմից չի ներկայացվել 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը և չի կատարվել համապատասխան վճարումները:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը.

Հիմք ընդունելով Օրենսգրքի 15-րդ հոդվածով 3-րդ մասին համապատասխան սահմանված տեսակարար կշիռների մեթոդը՝ ֆիզիկական անձի հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ ձևով.

Ֆիզիկական անձ Աշոտ Գրիգորյանի կողմից Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Կոտայքի փողոց 1/51 հասցեում օտարված անշարժ գույքի հողի հարկման նպատակով հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 1,261,656 ՀՀ դրամ, իսկ գույքահարկի հաշվարկման նպատակով շինության շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ 13,648,538 ՀՀ դրամ: Օտարված գույքի ընդհանուր շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 14,910,194 ՀՀ դրամ (1,261,656+13,648,538): Շինության տեսակարար կշիռը ընդհանուր կադաստրային արժեքի մեջ կազմում է **91.5%** (13,648,538/14,910,194*100): Մարզ Կոտայք, համայնք Աբովյան ք. Կոտայքի փողոց 1/51 հասցեում օտարված անշարժ գույքի պայմանագրային արժեքը կազմում է 11,435,820 ՀՀ դրամ: Նշված գործարքից եկամտային հարկով հարկման բազան կկազմի **10,463,775 ՀՀ դրամ** (11,435,820*91,5%), որից եկամտային հարկը կհաշվարկվի **2,302,030 ՀՀ դրամ** (10,463,775*22%):

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ **18,416 ՀՀ դրամի** չափով (2,302,030*20օր*0,04%):

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը 10.05.2022 թվականի դրությամբ կազմում է **2,320,446 ՀՀ դրամ** գումար, որից հարկ՝ 2,302,030 ՀՀ դրամ, տույժ՝ 18,416 ՀՀ դրամ:

Հարկման բազա	Եկամտային հարկ	Հարկային օրենսգրքի 401 հոդվածով հաշվարկված տույժ	Ընդամենը
10,463,775	2,302,030	18,416	2,320,446

Միաժամանակ տեղեկացվում է, որ հարկային պարտավորությունները հաշվարկվել են 10.05.2022թ. դրությամբ և ենթակա է վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6. Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը:

7. Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը.

ՀՀ ՊԵԿ ՀՏ և ՌՎ վարչության կամերալ ուսումնասիրությունների և վերլուծության թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ



Հ. Ավետիսյան